Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/62» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

27.02.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Բերբերյան /գնահատող/, Տ. Պետրոսյան /գնահատող/, Ք. Մարտիրոսյան /բացող/, Ա. Երմազյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ « ԵՔ-ԳՀԾՁԲ-20/62» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Գ. Գևորգյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 27.02.2020թ-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. « ԵՔ-ԳՀԾՁԲ-20/62» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Գ. Գևորգյան)

2.1 Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Կարապետ Սահակյան» ԱՁ
2	«Բասլենդ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Գ. Գևորգյան)

3.1 Գնանշման հարցում ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/62» ծածկագրով գնման ընթացակարգ					
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվայ ին գինը	Առաջարկած գինը			
		ինքնարժեք	շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
«Կարապետ Սահակյան» ԱՁ	200000	179100	19900		199000
«Բասլենդ» ՍՊԸ		270000	42000		312000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Գ. Գևորգյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ «Կարապետ Սահակյան» ԱՁ -ի, որի ներկայացրած հայտում լիազորագիրը տրված է այլ անձի կողմից, մինչդեռ հրավերով պահանջվող հավելված 1-ը և հավելված 2-ը ստորագրվել է Կ.Կարապետյանի կողմից:

4.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը ծանուցել «Կարապետ Սահակյան» ԱՁ-ին մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը: Նշված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 02.03.2020թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Գ. Գևորգյան

Անդամներ՝ ..... Թ. Բերբերյան

..... Տ. Պետրոսյան

..... Ք. Մարտիրոսյան

..... Ա. Երմազյան

Քարտուղար՝ ..... Ն. Կիրակոսյան